անկախութիւն յայտարարելուց յետոյ լուծելու է Անդրկ. կառավարութիւնը, և հայ ժողովուրդը մնալու է բախտի բերմունքին՝ ներկայացուցչական ժողովը գտնում է անհրաժեշտ, որ Հայոց Ազգային Խորհուրդը՝ ուժեղացնելով իր կազմը՝ անցնի գործելու Հայութեան կենտրոնում՝ ստանձնելով կառավարական ֆունկցիաները, օժտուած դիկտատորական իրաւունքներով հայ կեանքի բոլոր երեւոյթների և գործերի նկատմամբ»:

Շատ ճիշտ էր վայրկեանի գնահատութիւնը. — դէպի՛ ինքնորոշում, դէպի՛ ինքնակազմակերպում, դէպի՛ հայրենի երկիր, ժողովրդի դիրքը:

Մայիս 27-ին Թուրքերի Ազգ. Խորհուրդն էլ որոշեց յայտարարել Ազրբէջանի անկախութիւնը. վարանումը այլևս անիմաստ էր: Դէպքերը գահավէժ՝ իրենք էին գալիս ստիպելու անել այն, ինչից մարդկային բանականութիւնը յամառօրէն աչխատում էր խուսափել:

Անկախութեան յայտարարութեան վրա պնդում էին և Բաթումից վերադարձած ներկայացուցիչները՝ Քաջազնունին, Խատիսեանը, Պապաջանեանը, որոնք մայիս 27-ի երեկոյեան մանրամասն դեկուցում տուին բանակցութիւնների ընթացքի և Վրաստանի քայլերից յետոյ ստեղծուած կացութեան մասին: Յաջորդ օր, մայիս 28-ին Ազգային Խորհուրդը որոշեց Բաթում ուղարկել Ալ. Խատիսեանից, Մ. Պապաջանեանից և Յ. Քաջազնունուց բաղկացած հաչտարար պատուիրակութիւն՝ տալով նրան բացարձակ լիազօրութիւն բանակցելու և հաչտութիւն կնքելու յանուն անկախ Հայաստանի: Անկախութեան յայտարարութիւնը, սակայն, եղաւ աւելի ուշ, մայիս 30-ին, աւելի արտաքին ճնշումների տակ, քան Ազգ. Խորհրդի յօժար կամքով:

Մայիս 29-ին գումարուեց Հ.Յ.Դ. Արևելեան և Արևմտեան Բիւրօների, Հ.Յ.Դ. Թիֆլիսի Կենտր. Կոմիտէի և Սէյմի ու Ազգ. Խորհրդի դաշնակցական հատուածների միացեալ նիստը, ուր մի անգամ ևս քննութեան առնուեց քաղաքական կացութիւնը և որոշուեց Հայաստանը յայտարարել անկախ հանրապետութիւն, կազմել կառավարութիւն միջկուսակցական հիմքերով, մինչև օրէնսդրական ժողովի գումարումը Ազգ. Խորհուրդն ու կառավարութիւնը տեղափոխել Երևան, որը պէտք է դառնար Հայաստանի Հանրապետութեան մայրաքաղաքը: Նոյն ժողովում Յ. Քաջազնունին նշանակուեց վարչապետի թեկնածու:

Այս ժողովից յետոյ միայն Ազգ. Խորհուրդը արաւ վճռական քայլ և մայիս 30-ին հրատարակեց հետեւեալ յայտարարութիւնը, որը, թէև իսկական առումով անկախութեան հռչակում չէր, բայց դէպքերի բերումով դարձաւ այդպիսին:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Անդրկովկասի քաղաքական ամբողջութեան լուծումով և Վրաստանի ու Ազրբէջանի անկախութեան հռչակումով ստեղծուած նոր դրութեան հանդէպ՝ Հայոց Ազգային Խորհուրդը իրեն յայտարարում է հայկական գաւառ-